

Բանալի բառեր՝

աուդիտորական գործունեություն, ոչ ֆինանսական հաշվետվություն, ինտեգրացված հաշվետվություն, գործունեության հիմնական ցուցիչներ:

Ժամանակակից պայմաններում լայն տարածում է ստացել այն գաղափարը, որ կազմակերպությունների (ընկերությունների) գործունեության արդյունքները գնահատելիս անհրաժեշտ է հիմնվել ոչ միայն ֆինանսական, այլև ոչ ֆինանսական բնութագրիչների վրա:

Որպես կանոն, կազմակերպություններն իրենց տարեկան հաշվետվություններում ներառում են միայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջվող ֆինանսական հաշվետվությունները: Սակայն վերջին տարիներին ավելի մեծ տարածում է ստանում ոչ ֆինանսական բնույթի տեղեկատվության ներկայացումը տարեկան հաշվետվություններում՝ ֆինանսական տեղեկատվության հետ միասին:

Ոչ ֆինանսական բնույթի տեղեկատվության արտադրման նպատակով մշակվել են ոչ ֆինանսական հաշվետվությունների տարբեր տեսակներ, որոնց կազմում առանցքային դեր ունեն **ինտեգրացված հաշվետվությունները**:

Միջազգային ասպարեզում գործող մի շարք հայտնի ընկերությունների գործունեությամբ հետաքրքրված շահագրգիռ խմբերի պահանջով ընկերությունները իրենց տարեկան հաշվետվություններում ներկայացնում են ոչ միայն ավանդական ֆինանսական հաշվետվություններ, այլև հաշվետվություններ, որոնք պարունակում են տեղեկատվություն սոցիալական և շրջակա միջավայրի վրա ընկերության գործունեության ազդեցության, ինչպես նաև դրա վերջնական արդյունքում ստեղծված արժեքների վերաբերյալ:

Ինտեգրացված հաշվետվություններն արդեն ավանդական են դարձել այն ընկերությունների համար, որոնցում ֆինանսական տեղեկատվությունը լրացվում է նաև ընկերության գործունեության չափման այլ ցուցիչներով, որոնք կարտահայտեն դրա գործունեության արդյունավետությունը կորպորատիվ և սոցիալական պատասխանատվությանն առնչվող տարբեր նպատակներին հասնելու կապակցությամբ:

Միաժամանակ՝ ընկերության գործունեության արդյունքների հիմնական ցուցիչներն (ԳՀՑ) իրենցից ներկայացնում են ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցիչներ, որոնք ընտրվում են վերահսկելու տվյալ ընկերության գործունեության արդյունավետությունը թիզնեսի համար կրիտիկական կամ առաջնային համարվող ոլորտներում:

ԳՀՑ-ների առանձնացումը շատ բարդ գործընթաց է և ներառում է մի քանի փուլեր: Առաջին հերթին ընկերության տնօրենները պետք է որոշեն, թե որոնք են այդ ընկերության հիմնական նպատակները՝ սոցիալական և բնապահպանական հարցերի համատեքստում: Գլխավոր նպատակները սահմանելուց հետո պետք է սահմանվեն այն խնդիրները, որոնց լուծման արդյունքում միայն կապահովվի վերոնշյալ նպատակների իրականացումը: Հենց այդ խնդիրների լուծումը չափելու համար առանձնացնում են ԳՀՑ-ներ: Եթե ընկերության գլխավոր նպատակը շրջակա միջավայրի աղտոտման չափերի նվազեցումն է, ապա որպես խնդիր այստեղ կարող է հանդես գալ օրինակ էլեկտրաէներգիայի և ջրի ծախսի նվազեցումը: Այս խնդրի լուծումը չափելու համար, օրինակ, կարող է սահմանվել հետևյալ ցուցիչը՝ Նախորդ տարվա համեմատությամբ նվազեցնել ծախսվող էլեկտրաէներգիայի և ջրի ծավալը 30%-ով: Որպեսզի վստահ լինենք նշված խնդրի լուծման մեջ, պարզապես անհրաժեշտ կլինի համեմատել հաշվետու և նախորդ տարիների ցուցանիշների արդյունքները:

Ներկայումս շատ ընկերություններ են հրապարակում սոցիալական, բնապահպանական և ինտեգրացված հաշվետվություններ: Այս հաշվետվություններում ներառված տեղեկատվության հավաստիության ստուգման նպատակով վարձվում են աուդիտորներ: Նրանք արտահայտում են անկախ կարծիք՝ տնօրենների կողմից ընտրված ԳՀՑ-ների կիրառելիության, չափելիության, տեղիության և հաշվարկման ճշգրտության վերաբերյալ: Այսինքն՝ կարծիք է արտահայտվում, թե արդյոք ընտրված են հաշվարկված ԳՀՑ-ները արտահայտում են ընկերության գործունեության ճշմարիտ և իրական պատկերը: Այս անկախ վերանայումը բարձրացնում է հրապարակված ոչ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ օգտագործողների տարբեր խմբերի վստահությունը և թույլ տալիս կայացնել առավել հիմնավորված որոշումներ:

Ոչ ֆինանսական տեղեկատվության աուդիտը կապված է որոշ բարդությունների հետ, քանի որ.

- ինտեգրացված, սոցիալական և բնապահպանական հաշվետվությունները չեն համարվում պարտադիր հրապարակման ենթակա հաշվետվություններ. քանի որ տարբեր ընկերություններ կիրառում են ցուցիչների սահմանման, գնահատման և հրապարակման տարբեր սկզբունքներ, ինչն էլ նվազեցնում է նույն ոլորտի առանձին կազմակերպությունների տվյալների միջև համադրելիությունը,
 - ոչ ֆինանսական տեղեկատվության հրապարակումը սոր երեւոյթ է. այսինքն՝ այդ տեղեկատվության կազմողները հնարավոր է չունենան համապատասխան որակավորում և գիտելիքներ հնարավորինս արժանահավատ տեղեկատվության հրապարակելու համար:
- Ինչպես գիտենք, աուդիտի անցկացման առաջին փուլը

ՀՏԴ 657.6

ԻՆՏԵԳՐԱՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

**Հայկ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Տնտեսագիտության

դոկտոր,

դոցենտ

**ԵՊՀ տնտեսագիտության և
կառավարման ֆակուլտետի**

ֆինանսահաշվային

ամբիոնի

վարիչ

Ատենախոսության թեմա՝

Կազմակերպություններում արտաքին

աուդիտի կարգավորման արդի

հիմնախնդիրները

Գիտական ղեկավար՝

Հայկ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր,

դոցենտ

**Րաֆֆի
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ԵՊՀ

տնտեսագիտության և

կառավարման

ֆակուլտետի

ասպիրանտ

2015թ. մարտի 31-ին ավարտվող հաշվետու տարվա համար սահմանված Ասոցիացիայի ռազմավարական նպատակները, ՀՀ-ները և թիրախային ցուցանիշները

Աղյուսակ 1.

Ռազմավարական նպատակ	ԳՅՑ	Թիրախային ցուցանիշ
Աշխարհից անհրաժեշտ պրոֆեսիոնալ հաշվապահների զարգացման ուղղությամբ լինել առաջատար	Ասոցիացիայի անդամների և ուսանողների թվաքանակ	635,000
Ոգեշնչել աշխարհի ցանկացած վայրում գտնվող մարդկանց ստանալու ասոցիացիայի որակավորումը	Ուսանողների թվաքանակի աճի տեմպ	4.9%
Ընդլայնել ասոցիացիայի աշխարհագրությունը աջակցելու համար շահագրգիռ բոլոր խմբերին	Նոր անդամների թվաքանակը	11,100
Ապահովել երկարատև հարաբերություններ անդամների և ուսանողների հետ	Անդամների և ուսանողների բավարարվածության մակարդակ	75%
Ապահովել համախորդակենտրոն լուծումներ	Գործառնությունների տեսակարար կշիռ, որոնք բարձր են գնահատում ասոցիացիայի որակավորումը	88%
Գործառնական արդյունավետություն	Մեկ ուսանողի կամ անդամի հաշվով ընդհանուր ծախսեր	260 GBP

Ասոցիացիայի 2015թ. մարտի 31-ին ավարտվող հաշվետու տարվա ընթացքում ՀՀ-ների փաստացի արդյունքները և 2016թ. մարտի 31-ին ավարտվող հաշվետու տարվա համար սահմանված թիրախային ցուցանիշներն ու ծրագրերը⁶

Աղյուսակ 2.

Ռազմավարական նպատակ	2014-15թթ. փաստացի արդյունքներ	Թիրախային ցուցանիշ 2015-16թթ. համար	Ծրագրեր 2015-16թթ. համար
Աշխարհից անհրաժեշտ պրոֆեսիոնալ հաշվապահների զարգացման ուղղությամբ լինել առաջատար	633,947	Ասոցիացիայի անդամների թվի աճ 187,500-ով	Կատարել լրացուցիչ գլոբալ վերլուծություն բացահայտելու համար հաշվապահի որակավորման նկատմամբ աճող պահանջարկը
Ոգեշնչել աշխարհի ցանկացած վայրում գտնվող մարդկանց ստանալու ասոցիացիայի որակավորումը	4.6%	Ուսանողների թվաքանակը հասցնել 483,000-ի	Կատարել ներդրումներ ասոցիացիայի աշխատակիցների կարողությունների զարգացման համար որակավորման նկատմամբ աճող պահանջարկը բավարարելու նպատակով
Ընդլայնել ասոցիացիայի աշխարհագրությունը աջակցելու համար շահագրգիռ բոլոր խմբերին	11,530	Ուսանողների 68.5%-ը դառնա անդամ 4 տարվա ընթացքում, 12,000 նոր անդամ, ուսանողների 38% հաջողությամբ քննություն հաճնի	Օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաները և տարբեր հարցումների արդյունքները նշված ցուցանիշներին հասնելու համար
Ապահովել երկարատև հարաբերություններ անդամների և ուսանողների հետ	70%	75%	Լրացուցիչ ծախսերով ուսանողներին և անդամներին
Ապահովել համախորդակենտրոն լուծումներ	88%	85%	Ներդնել համախորդակենտրոն համակարգեր
Գործառնական արդյունավետություն	260 GBP	272 GBP	Առավել արդյունավետ համակարգերի կիրառում

ընդգրկում է դրա պլանավորումը, որը կարգավորվում է «Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի պլանավորումը» ԱՄՍ 300-ով: Համաձայն ստանդարտի՝ աուդիտի պլանավորումն ընդգրկում է դրա ընդհանուր ռազմավարության սահմանումը և ծրագրի մշակումը: Ծագրիտ պլանավորումը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ աուդիտորին օգնում է մի քանի ուղղություններով, ինչպես օրինակ՝

- ուշադրություն դարձնել աուդիտի կարելու բնագավառներին,
 - ժամանակին հայտնաբերել և լուծել խնդիրները,
 - ճիշտ կազմակերպել և ղեկավարել աուդիտը, այնպես, որ դա կատարվի արդյունավետ կերպով,
 - աջակցել աուդիտի թմի համապատասխան ունակություններ և հնարավորություններ ունեցող անդամների ընտրությանը, որոնք կարող են պատասխանել ակնկալվող ռիսկերին ու կատարել իրենց տրված հանձնարարականները,
 - հեշտացնել թմի անդամների ուղղորդումն ու ղեկավարումը, նրանց աշխատանքների վերանայումը և այլն:
- Այուրաքանչյուր, ինտեգրացված հաշվետվողականության աուդիտն ունի մի շարք առանձնահատկություններ: Դրանցից են.

- անհրաժեշտ է համաձայնեցնել առաջադրանքի բովանդակությունը: Այն կարող է ընդգրկել պարզապես ցուցիչների արժեքների ճշմարտացիության կամ էլ ցուցիչների տեխնոլոգիան և արժանահավատության ստուգում,
 - անհրաժեշտ է ուսումնասիրել ընկերության գործունեությունը՝ նրա առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու համար,
 - անհրաժեշտ է ձեռք բերված գիտելիքների հիման վրա քննարկել ցուցիչների տեխնոլոգիանը՝ ընկերության առջև դրված գլխավոր նպատակների համատեքստում,
 - անհրաժեշտ է գնահատել ցուցիչները ստուգելու համար, որ դրանք բանակապես չափելի են և փաստաթղթերով հիմնավորված,
 - անհրաժեշտ է իդենտիֆիկացնել այն ցուցիչները, որոնք առավել ենթակա են խեղաթյուրման ռիսկի:
- Ցուցիչների առանձնահատկությունը հասկանալու համար դիտարկենք ՄակԴոնալդս ընկերության օրինակը: Այդ ընկերությունը 1990թ. հիմնադրեց Բնապահպանական գլոբալ կոմիտե, որը սահմանեց ընկերության 3 գլխավոր նպատակները բնապահպանական հարցերի կապակցությամբ՝

- Եներգախնայողություն՝ բարելավել էլեկտրաէներգիայի օգտագործման արդյունավետությունը նվազեցնելու համար ծախսերը և ազդեցությունը շրջակա միջավայրի վրա,
 - թափոնների կառավարում և փաթեթավորում՝ առանց շրջակա միջավայրի վրա որևէ ազդեցության,
 - «Կանաչ» ռեստորանների կառուցում՝ ավելացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն չունեցող նյութերի օգտագործումը նոր ռեստորանների նախագծման և կառուցման փուլերում:
- Ընկերությունը սահմանել է խնդիրներ՝ գլխավոր նպատակներից յուրաքանչյուրի իրագործման համար: Օրինակ՝ 2-րդ նպատակի համար սահմանված խնդիրն է՝ առավելարկել վերամշակված նյութերից ստացվող փաթեթավորման օգտագործումը: Նշված խնդրի լուծման վերահսկողության համար սահմանված ցուցիչն է ընդհանուր փաթեթավորման մեջ վերամշակված նյութերից ստացված փաթեթավորման տեսակարար կշիռը³:
- Աուդիտորի նպատակն է աուդիտորական ընթացակարգերն այնպես նախագծել և իրականացնել, որպեսզի աուդիտորը կարողանա ձեռք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ հիմնաստված ված եզրահանգումների գալու և դրանց վրա աուդիտորի կարծիքը հիմնավորելու համար: Ապացույցներ ձեռք բերելու համար իրականացվում են հետևյալ հիմնական ընթացակարգերը՝

- հարցումներ ընկերության ղեկավարությանը,
- հարցումներ ուղղորդվող փորձագետներին,
- բանաձեռների վերահաշվարկ մաթեմատիկական անճշտություններ բացահայտելու համար,
- հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրություն,
- հավաստումների ստացում 3-րդ անձանցից: Որպեսզի համոզվենք, որ օրինակ՝ ՄակԴոնալդսի փաթեթավորման 30%-ը ստացվում է վերմշակված նյութից, աուդիտորը պետք է կատարի հետևյալ ընթացակարգերը՝
- ուսումնասիրի ընկերության կողմից հիմնադրված Բնապահպանության գլոբալ կոմիտեի կողմից ընդունված ռազմավարության օրինակը, հավաստիանալու, որ այն ընդգրկում է վերնաշրջալ գլխավոր նպատակը,
- ղեկավարությանը հարցումներ կատարելու միջոցով հասկանալ, թե ինչպես է ստացվել այդ 30%-ը,
- կատարի վերահաշվարկ ստուգելու համար տեսակարար կշիռ ստացման ճշտությունը,
- հասկանալ, թե ինչ աղբյուրներից է ձեռք բերվել հաշվարկների համար հիմք հանդիսացած տեղեկատվությունը,
- տեղեկատվության ճշգրտությունը ստուգելու համար ընտրանքային եղանակով ճշտի տեղեկատվության համապա-

տասխանությունը սկզբնաղբյուրի հետ,

- հասկանա, թե ինչ բնութագրիչներից ելնելով է փաթեթավորումը դասակարգվում որպես վերանշակված նյութերից ստացված,

- ընտրանքային եղանակով ստուգի, որ փաթեթավորման դասակարգումը տեղի է ունեցել ընդունված սկզբունքներին համապատասխան:

Աուդիտորը, իր ստուգումն անցկացնելիս, հանգում է որոշակի դժվարությունների՝ պրոֆեսիոնալ կարծիք արտահայտելու համար անհրաժեշտ ապացույցների ձեռք բերման գործընթացում: Այդ բարդությունները ներառում են հետևյալ հանգամանքները՝

- շատ հաճախ ցուցիչներին հնարավոր չէ տալ քանակական գնահատական,

- որոշ ցուցիչներում օգտագործված սահմանումները կարող են անհասկանալի լինել,

- աուդիտորները կարող է չունենան հատուկ որակավորում եւ փորձ՝ բնապահպանական ու սոցիալական հարցերի բնագավառում գնահատականներ տալու համար,

- որոշ նպատակներ չափազանց սուբյեկտիվ են որեւէ կերպ չափելու համար: Նման օրինակ է Էկոլոգիապես մաքուր արտադրանքի թողարկումը,

- քանի որ, որպես կանոն, չկան նպատակների, խնդիրների եւ ցուցիչների սահմանման միջազգայնորեն ընդունված ստանդարտ մոտեցումներ, ղեկավարությունը կարող է իր ցանկությամբ ընտրել չափիչներ, ինչն առաջացնում է խեղաթյուրման ռիսկի հավանականություն,

- որոշ դեպքերում հնարավոր չէ ստանալ բավականաչափ եւ համապատասխան ապացույցներ տեղեկատվության գրանցման համակարգի բացակայության պատճառով:

Առաջադրանքի վերջում աուդիտորը հաշվետվություն է տրամադրում ղեկավարությանը, որը պետք է ներառի հետևյալ հիմնական բաժինները՝

- մեթոդաբանությունը՝ այսինքն՝ այն հիմնական մեթոդները, ընթացակարգերը եւ գործիքները, որոնք օգտագործվել են աուդիտորի կողմից առաջադրանքը կատարելիս,

- ստուգման ենթարկված հարցերը՝ ընկերության գործունեության որ ոլորտներն են ուսումնասիրվել, որոնց առնչությամբ էլ աուդիտորը կարծիք է կազմել,

- առաջադրանքի կատարման հիմունքները՝ միջազգային ստանդարտները եւ օրենսդրական ակտերը, որին պետք է համապատասխանեք հրապարակված տեղեկատվությունը, եւ որոնց համաձայն՝ աուդիտորը պետք է անցկացնեք աուդիտ,

- աուդիտորի կողմից արտահայտվող կարծիքը՝ ձեռք բերված ապացույցների հիման վրա:

Գործունեության որոշ ոլորտներում գործող ընկերություններ առավել ենթակա են ռիսկի՝ կապված սոցիալական եւ բնապահպանական հաշվետվությունների հետ: Նմանատիպ ընկերություններ են գազի կամ նավթի արդյունահանմամբ զբաղվող ընկերությունները: Նման ընկերություններում աուդիտ անցկացնելիս աուդիտորը պետք է մեծ ուշադրություն դարձնի հետևյալ ռիսկային տարրերի վրա, այդ թվում՝

- պահուստներ,
- պայմանական պարտավորություններ,
- ակտիվների արժեզրկում,
- բնապահպանական ծախսերի ճանաչում,
- Էկոլոգիապես մաքուր արտադրանքի արտադրության համար կատարված հետազոտության եւ զարգացման ծախսերի ճանաչում,

- ընկերության համար անընդհատության սկզբունքի հիման վրա հաշվետվությունների պատրաստման տեղիություն:

Ինտեգրացված հաշվետվությունների Եությունն ու կառուցվածքը իրապես բացահայտելու համար շատ կարևոր է ծանոթանալ միջազգային պրակտիկայում արդեն հրապարակված նման հաշվետվություններին:

Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիան (այսուհետ՝ ասոցիացիա) 2015թ. հրապարակեց 2015թ. մարտի 31-ին ավարտվող հաշվետու տարվա ինտեգրացված հաշվետվությունը: Հաշվետվության հենց սկզբում նշվում է, որ ասոցիացիայի առաքելությունն է լինել գլոբալ առաջատար հաշվապահություն մասնագիտության մեջ՝

- ապահովելով համապատասխան մասնագետների հա-

սանելիությունն աշխարհի ցանկացած վայրում,

- աջակցելով ասոցիացիայի անդամներին իրենց մասնագիտական ուղու ընթացքում,

- հասնելով եւ պահպանելով ամենաբարձր էթիկական ու պրոֆեսիոնալ ստանդարտները,

- պաշտպանելով հասարակական շահը՝:

Ինչպես յուրաքանչյուր ինտեգրացված հաշվետվության պարագայում, այնպես էլ այս հաշվետվությամբ սահմանված են ռազմավարական նպատակներ, որոնց միջոցով գնահատվում են ընկերության գործունեության հիմնական արդյունքները: Ռազմավարական նպատակին հասնելու ուղղությամբ հաշվետվությունը որոշելու համար օգտագործվում են առնչվող, չափելի եւ համապատասխան ԳՀՑ-ներ, որոնց համար սահմանվում են թիրախային ցուցանիշներ:

Ասոցիացիայի գործունեության գնահատման համար սահմանված հիմնական ռազմավարական նպատակները, ԳՀՑ-ները եւ թիրախային ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Վերոնշյալ ռազմավարական նպատակների համար սահմանված ԳՀՑ-ների փաստացի արժեքները, վերջիններիս թիրախային ցուցանիշները եւ դրանց ուղղությամբ իրականացվելիք ծրագրերը՝ 2016թ. մարտի 31-ին ավարտվող տարվա համար, ներկայացված են աղյուսակ 2-ում:

Իհարկե, Ինտեգրացված հաշվետվությունների կիրառումը կապված է մեթոդաբանական եւ պրակտիկ մի շարք հիմնահարցերի հետ: Միաժամանակ՝ դեռեւս չի ձեւավորվել այն միասնական գործող մարմինը, որը պատասխանատու կլինի հաշվետվության բովանդակության, կառուցվածքի եւ այլ պահանջների սահմանման ու վերահսկողության համար: Իսկ այդ միասնականության բացակայության պայմաններում էապես նվազում է այն արժեքը, որն ապահովում են ինտեգրացված հաշվետվությունները: Ուստի՝ խիստ կարևոր է, առաջին հերթին, ձեւավորել այնպիսի մարմին, որի հիմնական գործառնություն կլինի համախմբել տարբեր երկրների մասնագիտական կառույցները՝ ինտեգրացված հաշվետվողականության ներդրման գործընթացի շուրջ:

Հետագայում միայն հնարավոր կլինի մշակել եւ ընդունել միջազգային ստանդարտներ, որոնք կկարգավորեն ինտեգրացված հաշվետվությունների պատրաստման ու ներկայացման հետ կապված հարցերը, ինչը թույլ կտա ձեւավորել հիմք՝ տարբեր երկրներում միասնական սկզբունքների հիման վրա հաշվետվություններ պատրաստելու եւ միեւնոյն ոլորտի ընկերությունների հաշվետվությունների միջև համարդելիություն ապահովելու համար:

Այդ հաշվետվողականությունը չափազանց կարևոր է մեր նման փոքր երկրների համար, քանի որ ներկայումս խոշոր ներդրողների մեծամասնությունը ներդրումային որոշումներ կայացնելիս առաջին հերթին հիմնվում է ոչ ֆինանսական բնույթ պարունակող հաշվետվությունների վրա, մասնավորապես՝ ինտեգրացված հաշվետվությունների, քանի որ դրանում պարունակվող տեղեկատվությամբ է մեծապես հնարավոր գնահատել ընկերության պոտենցիալը եւ աճի հեռանկարները:

Ուստի՝ զարգացող երկրների համար սա շատ մեծ հնարավորություն է ներգրավելու օտարերկրյա ներդրումներ եւ զարգացնելու ազգային տնտեսությունը: Իսկ դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է իրազեկել գործարարներին նման հաշվետվողականության գոյության վերաբերյալ եւ ձեռնամուխ լինել միասնական միջազգային մարմնի ձեւավորման գործընթացին՝ հաշվետվողականության ներդրման անհրաժեշտ մասնագիտական ընդհանուր հիմք ունենալու նպատակով:

Ներկայացվել է 01.02.2017թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2017թ.

1. Advanced Audit and Assurance, Kaplan Financial Limited, 2015, p. 474.
2. ԱՄՍ 300 «Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի պլանավորումը»
3. <http://www.aboutmcdonalds.com/mcd/sustainability.html>
4. ԱՄՍ 500 «Աուդիտորական ապացույցներ»
5. ACCA integrated report for the year ended 31 March 2015, 2015, p. 3.
6. ACCA integrated report for the year ended 31 March 2015, 2015, p. 19.